

Աւանդութեան մը համեմատ , զոր հանգ . Տ . Մամբրէ ԳՆ .  
իր նախորդներէն և տեղացի ծեր Հայերէն էր լսած , տախկա  
փլածոն է այն եկեղեցիին , զոր Եգիպտոսի Հայերը նոյն մի-  
ջոցին ուզած են կառուցանել , ազգապատկան այդ գեանին ,  
ըստ հինաւուրց գրոյցներու՝ Արուստհլէ յիշուած Ս . Յովհանն-  
նէս Մկրտիչ հին հայ եկեղեցւոյ տեղւոյն վրայ , երբ պահ մը  
չեն յաջողած գնել այժմեան եկեղեցւոյ տեղը :

Յայտնի չէ սակայն թէ , այդ շինութիւնը կատարուած է  
Կիրակոսի՞ օրով , որ 1835-ին հրամարտ և մեկնած է Երու-  
սաղէմ , թէ իր յաջորդին՝ Գաբրիէլի ասնն , որ 1837-ին ըս-  
կած է արդէն Ս . Աստուածածին եկեղեցւոյ շինութեան պատ-  
րաստութեանց : Սա միայն ստոյգ է թէ լսի հիմերը օրհնուած  
են այս եկեղեցիին , որ չէ իսկ օծուած , թերևս բոլորովին  
ամբողջացած ալ չըլլալով :

